Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Ապրիլ

թիվ 4 (176)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի շարք ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման, արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև «Էլանժ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի շարք բանկերի «Ինտել-էքսպրես», «Յունիստրիմ», «Անելիք» և «Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող «Իդրամ» ՍՊԸ-ի և «Թել-Սել» ՓԲԸ-ի որոշ մասնաճյուղեր հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՊԱՊ շինարար» ՍՊԸ-ին և «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Մանիտուն» ՍՊԸ-ին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի որոշ ներկայացուցչություններ գրանցումից հանելու և դրանք որպես մասնաճյուղեր գրանցելու, «Արարատբանկի», «Յունիբանկի» և «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մի քանի մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի «Կենտրոն» մասնաճյուղի գործունեության դադարեցումը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ՓԲԸ-ի, 1 ՍՊԸ-ի, 5 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 6 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՓԲԸ-ների նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 309-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգը» հաստատելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 310-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 311-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 312-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 313-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 314-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 315-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 316-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 42-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 444-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 44-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2003 թվականի հունիսի 18-ի թիվ 221-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

19 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Արս էլիտ», «Մուվ Մեդ», «Պանտերա Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 81Ա, 83Ա, 84Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Վաղարշ և որդիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին, «Բոնուս առևտրի կենտրոն», «Փրոդլայն», «ՎՎՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 82Ա, 85Ա, 117Ա, 120Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «էլանժ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիան (որոշում թիվ 87Ա):
- ***«Ինտելէքսպրես» և «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական, «Արարատբանկ» բաց բաժնետիրական, ինչպես նաև «ԲՏԱ բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 88Ա, 122Ա, 90Ա):
- ***«Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԲՏԱ բանկ», «Ինեկոբանկ» և «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 89Ա, 100Ա, 121Ա):
- ***Դադարեցվել են*** «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սիթի-Բագրատունյաց», «Սիթի-Դավիթաշեն», «Սիթի-Կոմիտաս», ինչպես նաև «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերության «Բագրատունյաց» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 91Ա, 118Ա, 119Ա):
- ***«Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 97Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՊԱՊ շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ և «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 98Ա, 99Ա):
- ***Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա է տրամադրվել*** «Մանիտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 108Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Բերդ», «Նոյեմբերյան», «Գավառ», «Գորիս», «Մարտունի», «Սիսիան» ներկայացուցչությունները և ***գրանցվել են*** «Բերդ», «Նոյեմբերյան», «Գավառ», «Գորիս», «Մարտունի», «Սիսիան» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/262Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Էլիտ Պլազա» և «Զեյթուն», «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Գորիս», ինչպես նաև «Կրեդո Ֆինանս» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Աջափնյակ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/266Ա, 1/268Ա, 1/326Ա):
- ***Գրանցվել է*** «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/281Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փակ բաժնետիրական, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 5 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 6150000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/270Ա, 1/280Ա, 1/312Ա, 1/314Ա, 1/3234Ա, 1/335Ա, 1/338Ա), ինչպես նաև 6 արտարժույթի փոխանակման կետերի, 2 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/269Ա, 1/286Ա, 1/287Ա, 1/302Ա, 1/339Ա, 1/342Ա, 1/288Ա, 1/313Ա):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի «բ1» կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1, 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1, 184-րդ հոդվածի 3.1 կետերը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 309-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀՊՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ Արթուր Ջավադյան
15 նոյեմբերի 2012 թ.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2013 թվականի -ի թիվ հրամանով

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար _____ Հրայր Թովմասյան
19 ապրիլի 2013 թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև կարգավորվում են հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային եղանակով Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Էլեկտրոնային եղանակով ներկայացված փաստաթղթերի բնօրինակները ընկերությունները պարտավոր են պահպանել առնվազն 5 տարի՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց բնօրինակի ներկայացման պահանջը սահմանված է օրենսդրությամբ:

3. Կազմակերպությունները գրանցման, հետագայում նաև անվանափոխության հետ կապված կանոնադրության փոփոխության գրանցման փաստաթղթերի հետ մեկտեղ Կենտրոնական բանկ են ներկայացնում նաև Կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտը՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի, որին կից ներկայացվում են նաև հետևյալ փաստաթղթերը՝

1) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անվանումները օգտագործելու դեպքում՝ նաև այդ բառերի օգտագործման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը,
2) լիազորագիր, եթե հայտը ներկայացվում է հայտատուի կողմից լիազորված անձի կողմից:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված հայտը և բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական բանկն առցանց ռեժիմով www.e-register.am կայքի տեղեկատվական համակարգում ստուգում է՝ արդյոք ներկայացված անվանումը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է/չի կարող օգտագործվել և մերժման հիմքեր չբացահայտելու դեպքում, համապատասխան Կազմակերպությունների մասին օրենքներով գրանցման համար սահմանված ժամկետներում գրանցում է Կազմակերպության ֆիրմային անվանումը: Եթե նշված ֆիրմային անվանումն արդեն իսկ օգտագործված է կամ չի կարող օգտագործվել, ապա Կենտրոնական բանկը ֆինանսական կազմակերպությանը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով հայտնում է այդ մասին: Ընկերությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ներկայացնել նոր հայտ: Ֆիրմային անվանման նոր հայտ չներկայացնելը հիմք է գրանցումը մերժելու համար:

5. Սույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական բանկ գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը համարվում է գրանցված կամ մերժված, եթե Կենտրոնական բանկի կողմից որոշում է կայացվում կազմակերպությունը գրանցելու/մերժելու կամ կազմակերպության կանոնադրության փոփոխությունը գրանցելու/մերժելու վերաբերյալ կամ համարվում է գրանցված, եթե օրենքով սահմանված ժամկետում գրանցման/մերժման որոշում չի կայացվում:

6. Կենտրոնական բանկը վարում է իր կողմից գրանցվող Ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման համար նախատեսված գրանցամատյան:

7. Կենտրոնական բանկի կողմից Կազմակերպությունների գրանցման կամ ֆիրմային անվանման փոփոխության հետ կապված կանոնադրության փոփոխության գրանցման մասին որոշում կայացնելուց հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այդ մասին տեղեկացնում է իրավաբանա-

կան անձանց գրանցման պետական լիազորված մարմնին՝ ֆիրմային անվանման գրանցման կամ փոփոխման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

8. Կազմակերպությունների ֆիրմային անվանման գրանցման հայտը մերժվում է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն որպես ֆիրմային անվանում չի կարող (արգելվում է) օգտագործվել հայտում նշված անվանումը կամ հայտը չի ներկայացվել սույն կարգով սահմանված կարգով: Կազմակերպությունների ֆիրմային անվանման գրանցման հայտը մերժվում է նաև Կազմակերպության գրանցումը/կանոնադրության փոփոխության գրանցումը մերժվելու և սույն կարգի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

9. Կազմակերպությունների ֆիրմային անվանման, ինչպես նաև դրանց փոփոխությունների գրանցումից հետո 10-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը Կազմակերպությանն է հանձնում Կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի: Ընդ որում, վերաձևակերպված վկայականները տրամադրվում են Կազմակերպությանը՝ վկայականի հին տարբերակը Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

10. Ֆիրմային անվանման գրանցման վկայականի կորստի կամ ոչնչացման դեպքում Կազմակերպությունը կարող է Կենտրոնական բանկ դիմում ներկայացնել վկայականի կրկնօրինակը ստանալու համար՝ նախօրոք այդ մասին հայտարարություն տալով զանգվածային լրատվության միջոցով: Նշված փաստը ապացուցող փաստաթուղթը կարգով պահանջվող այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

11. Կենտրոնական բանկը ֆիրմային անվանման գրանցման կորած կամ ոչնչացած վկայականի կրկնօրինակը Կազմակերպությանը տալիս է Կազմակերպության համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

12. Ֆիրմային անվանման գրանցման կորած վկայականը գտնելու դեպքում Կազմակերպությունը գտնված գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

13. Ֆիրմային անվանման գրանցման վկայականը օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն) դեպքում Կազմակերպությունը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ գրանցման վկայականի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով գրանցման վկայականի բնօրինակը:

14. Կենտրոնական բանկը ոչ պիտանի դարձած ֆիրմային անվանման գրանցման վկայականի կրկնօրինակը Կազմակերպությանը տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:

15. Ֆիրմային անվանման գրանցման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

16. Ֆիրմային անվանման գրանցման վկայականի կորստի, ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն) դեպքում, գրանցման վկայականի նոր կրկնօրինակը տրվում է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով:

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՑ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որպես կազմակերպության ֆիրմային անվանում գրանցել հետևյալ անվանումը.

_____

(գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը, դրա հապավումը կամ կրճատ ձևը (եթե այդպիսին կա)

_____

(գրանցման ներկայացված ֆիրմային անվանման բացատրությունը, եթե այն հայերեն հասկանալի չէ)

Ֆիրմային անվանման գրանցման պատճառ է հանդիսացել (ընդգծել համապատասխան տողը).

- հիմնադրում
- վերակազմակերպում
  - միացում
  - վերակազմավորում (կազմակերպաիրավական ձևի փոփոխություն)
- անվանափոխություն

Կից ներկայացնում ենք ֆիրմային անվանման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Առդիր՝ __ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և հայտի մերժման:

Հայտը ներկայացնող անձ՝

_____

(Գրանցվող կազմակերպության հիմնադիրներին ներկայացնող իրավասու անձի անունը, ազգանունը, հեռախոսը, բնակության (հաշվառման) վայրը, ստորագրությունը կամ գրանցվող ընկերության անվանումը, գտնվելու վայրը, գրանցվող ընկերության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__թ.

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՖԻՐՄԱՅԻՆ
ԱՆՎԱՆՄԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի _____
թվականի թիվ _____ որոշմամբ

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման» կարգի՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

_____ ընկերությանը

առ այն, որ Կազմակերպության ֆիրմային անվանումը գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ
«__» _____ 20___թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20___թ.

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 1-ի 9-րդ կետի «ը» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը) բանկի ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2) Կանոնակարգ 1-ի 12.1 կետից հանել «, ինչպես նաև բանկի հիմնադիրներին տրամադրվում է ֆիրմային անվանման գրանցման վկայական՝ համաձայն ենթահավելված 27-ի» բառերը:

3) Կանոնակարգ 1-ի 3.1 գլուխն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգ 1-ի 86.2 կետի առաջին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) բանկի ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

5) Կանոնակարգ 1-ի 86.2 կետի երկրորդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգ 1-ի ենթահավելվածներ 26-ը և 27-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 310-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀՊՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/01-ի 6.1 կետի «, ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2ը-ի» բառերը հանել:
2) Կանոնակարգ 3/01-ի 24-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «ե. ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:
3) Կանոնակարգ 3/01-ի 29-րդ կետի «, ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն Հավելված 2ը-ի» բառերը հանել:
4) Կանոնակարգ 3/01-ի 46.1 կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1) ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:
5) Կանոնակարգ 3/01-ի 46.1 կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:
6) Կանոնակարգ 3/01-ի 15.1 գլուխն ուժը կորցրած ճանաչել:
7) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 2ը-ն հանել:
8) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 2է-ն հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 311-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀՊՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը. ներդրումային ընկերության ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2) Կանոնակարգի 13-րդ կետի «, ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն Հավելված 2ե-ի» բառերը հանել:

3) Կանոնակարգի 5.1 գլուխն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգի 54-րդ կետի «, իսկ ներդրումային ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ սույն կանոնակարգի Հավելված 2ե-ի համաձայն» բառերը հանել:

5) Կանոնակարգի 81.1 կետում.

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

բ. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգի Հավելված 2դ-ն հանել:

7) Կանոնակարգի Հավելված 2ե-ն հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 312-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀՊՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ե2» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե2. օպերատորի ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2) Կանոնակարգի 3.1 գլուխն ուժը կորցրած ճանաչել:

3) Կանոնակարգի 11-րդ կետի «, ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 2.2-ի» բառերը հանել:

4) Կանոնակարգի 35-րդ կետի «, իսկ օպերատորի ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 2.2-ի» բառերը հանել:

5) Կանոնակարգի 61.1 կետում.

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

բ. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգի Հավելված 2.1-ը հանել:

7) Կանոնակարգի Հավելված 2.2-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 313-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀԳՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2) Կանոնակարգի 3.1 գլուխն ուժը կորցրած ճանաչել:

3) Կանոնակարգի 11-րդ կետի «, ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 2.2-ի» բառերը հանել:

4) Կանոնակարգի 35-րդ կետի «, իսկ Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ սույն կանոնակարգի հավելված 2.2-ի համաձայն» բառերը հանել:

5) Կանոնակարգի 61.1 կետում.

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

բ. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգի Հավելված 2.1-ը հանել:

7) Կանոնակարգի Հավելված 2.2-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 314-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀԳՏ N13 (457)[1], 2.05.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 5-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել «թ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ. կառավարչի ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2) Կանոնակարգը լրացնել 41.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.1. Եթե կառավարչի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է կառավարչի ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա բացի սույն կանոնակարգի 40-րդ կետում նշված փաստաթղթերից՝ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 315-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.04.2013 թ. (ՀՀԳՏ N13 (457)[1], 2.05.2013):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգել/սահմանել ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտի ձևի, դրան ներկայացվող պահանջների, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները, ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ1» կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

